

**Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն  
Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն**

**ՆԱՌԱ ՂԱՐԻՔԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

**1894 - 1896 թթ. ՋԱՐԴԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ**

**Ժ. 01. 01. - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**Սրապիոնյան Սերժիկ Գագիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Գաբրիելյան Վազգեն Արշալույսի**  
բանասիրական գիտությունների  
թեկնածու  
**Խառատյան Ալա Արամի**

Առաջատար կազմակերպություն՝

**Խ.Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական  
համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 17-ին՝ ժամը 14<sup>30-ից</sup>,  
ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի  
նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլ-  
տետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

**Ալ. Ա. Մակարյան**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Փոքր եղեռնի»՝ այսինքն՝ տասնիններորդ դարի 90-ական թթ. մինչև 1915 թ. մեծ եղեռնն ընկած ժամանակահատվածում ստեղծված արևմտահայ արծալը՝ սուլթան Համիդի կազմակերպած պարբերական ջարդերն արտացոլող մի պատկառելի գեղարվեստավերական գրականություն, թեև դուրս չի եղել ուսումնասիրողների տեսադաշտից, սակայն չի քննվել ու արժևորվել արդի գրականագիտության նվաճումների տեսանկյունից: Տարբեր գրականագետներ իրենց հետազոտած թեմաների առնչությամբ առանձին - առանձին անդրադարձել են այս կամ այն գրողին ու նրա ստեղծագործությանը, մինչև ջայտօր չուցնել նրա համակարգված ու համապատկերային քննություն, և գեղարվեստական այդ երևույթները համակողմանիորեն բնութագրող ամբողջական գիտական ուսումնասիրություններ: Այնինչ դրանց անհրաժեշտությունն զգալի է ոչ միայն առանձին գրողների ու նրանց գեղարվեստական երկերի արժևորման, այլև ուսումնասիրվող ժամանակաշրջանի իրականության և գրականության գեղագիտական հարաբերության և մեր գրական մտածողության զարգացման ընթացքը բնորոշելու առումով:

Հրապարակային պաշտպանության ներկայացվող սույն ատենախոսությունը նվիրված է մի կարևոր պատմաշրջանում հանդես եկած արևմտահայ արծակագիրների տարբեր ժանրերի գործերում հասարակական - քաղաքական կյանքի գեղարվեստական արտացոլման օրինաչափությունների լուսաբանմանը:

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՐԻԿԱՆ, ՆՊԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության **առարկան** 1894 - 1896 թթ. ջարդերի հետևանքով ձևավորված արևմտահայ արծակի համապատկերային դիտարկումն է: Ներկայացված են արևմտահայ հեղինակներ Հ. Թլկատինցու, Արփ. Արփիարյանի, Լ. Բաշայանի, Եր. Օտյանի, Առանձարի, Երուխանի, Ս. Պարթևյանի, Տ. Չյուկյուրյանի, Ռ. Ջարդարյանի, Մ. Սվաճյանի, Վ. Սվաճյանի, Մ. Պոտուրյանի, Վ. Թեքեյանի այս՝ «փոքր եղեռնի» թեման արծարծող ստեղծագործությունները՝ իբրև մեկ ամբողջություն:

Ուսումնասիրության **նպատակն** է ցույց տալ, թե ժամանակն ու դեպքերը թեմատիկ - գաղափարական, գեղագիտական ի՞նչ փոփոխություններ են առաջ բերել արևմտահայ արծակում, և զարգացման ի՞նչ ճանապարհ է անցել այն:

Ուսումնասիրության **հիմնախնդիրներն** են՝

1. 1894 - 1896 թթ. զանգվածային ջարդերը բնորոշել որպես առաջին ցեղասպանություն, որ հանգեցրեց ոչ միայն ֆիզիկական բնաջնջման, այլև հայ ժողովրդի հոգեկերտվածքի մեծ ու ավերիչ խաթարումների,

2. պատմական դեպքերով պայմանավորված՝ ուսումնասիրել նշված շրջանի արևմտահայ արծակի զարգացման ընթացքը, ուր էապես փոխվեցին նրա բովանդակությունն ու արտահայտչաձևերը,

3. բացահայտել ու մեկնել ջարդերի ազդեցությամբ ձևավորվող նոր հերոսի ներաշխարհը, հոգեկերտվածքային փոփոխությունները՝ իրենց տարաբնույթ՝ դրամատիկ և հերոսական դրսևորումներով ու զարգացումներով,

4. քննել ու վեր հանել ոչ միայն աղետի թեմայով ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունները, այլև դրանց հոգեբանական և փիլիսոփայական խոր ու նրբին ենթաշերտերը:

### **ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության բերած կարևոր նորությունն այն է, որ առաջին անգամ վերլուծական փորձ է արվում ներկայացնելու 1894 - 96 թթ. ողբերգական իրադարձությունների հետևանքով մարդու կրած հոգեկերտվածքային փոփոխությունների ընթացքը և դրա գեղարվեստական արտացոլումները արևմտահայ գրականության մեջ: Աշխատանքն իր հիմնական հարցադրումներով ամբողջացնում է ինչպես մինչև 1915 թ. արևմտահայ գրողների արձակ ստեղծագործությունները, այնպես էլ դրանց մասին եղած գրականագիտական աշխատությունները:

Աշխատանքի գիտական նորույթը նաև քննարկվող շրջանի արևմտահայ արձակի՝ արդի գրականագիտության նվաճումների դիտանկյունից բովանդակային ու գաղափարական նորովի վերլուծությունն է գրական երկերի ներքին ենթաշերտերի, հերոսների ներաշխարհի փոփոխությունների և զարգացումների բարդ ու նրբին ելևէջների բացահայտումներով:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ - ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

«Փոքր եղեռնի» թեմայով գեղարվեստական ստեղծագործությունները քննաբար արժևորելիս, նրանց առանձնահատկությունները բնորոշելիս իր վերլուծություններում հեղինակն օգտագործել է հայրենի և օտար գրականագետների՝ թեմային առնչվող աշխատություններում արտահայտված գիտատեսական դրույթները, առաջնորդվել հետազոտության պատմահամեմատական, համակարգային - տիպաբանական մեթոդական մոտեցումներով:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության թեման արդիական է այնքանով, որքանով որ «փոքր եղեռնի» թեման առաջին անգամ է քննվում՝ իբրև նորատիպ հերոսի հոգեկերտվածքային ձևավորման և թեմատիկ փոփոխությունների ազդակ: Այն այս մոտեցումով չի քննվել կամ ամբողջությամբ չի դարձել գրականագիտական հետազոտությունների առարկա: Մինևույն ժամանակ՝ քննվող հեղինակների ստեղծագործությունները՝ իբրև մեկ ամբողջություն, առաջին անգամ են ներկայացվում սույն աշխատության մեջ:

Մյուս կողմից՝ մարդու նկատմամբ անպատիժ ու անպատասխան թողնված ոճրագործությունը հնարավոր է դարձնում դատապարտելի երևույթի կրկնու-

թյունը: Յենց այս հրամայականով էլ իմաստավորվում է Յայոց եղեռնին նվիրված ամեն մի գրականագիտական երկի քննության ու մեկնության անհրաժեշտությունը: Ուստի՝ աշխատանքը իր գիտատեսական ու գործնական նշանակությամբ կարող է օգտակար լինել արևմտահայ գրականությամբ, առհասարակ գրականության պատմությամբ զբաղվող գիտնականներին, բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, ինչպես նաև ցեղասպանության հարցերով հետաքրքրվող մասնագետներին:

## **ՌԻՍԻՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության առանձին մասեր ներկայացվել են ՅՅ գիտական պարբերականներում (տե՛ս հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում) ու գիտաժողովներում, իսկ ամբողջությամբ այն քնարկվել է ԵՊՅ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնում և հանձնարարվել է հրապարակային պաշտպանության:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթաբաժիններ պարունակող հինգ գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից և կազմում է A 4 չափի 166 էջ:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ հիմնավորվում է աշխատանքի թեման, բնութագրվում նյութի ուսումնասիրվածության աստիճանը, նրա արդիականությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքը, պարզաբանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

## **Գլուխ առաջին**

### **XIX դարվերջին թուրքիւնի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Իրականության և գեղարվեստի կապի, դրանց՝ միմյանցով փոխալայմանավորվածության բացահայտումն ու հիմնավորվածությունը փաստելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինչպես ժամանակն ու պատմական իրողությունները, այնպես էլ գրական կյանքի զարգացման ընթացքը, որի պատճառով էլ հետազոտության առաջին գլուխը (իր ենթագլուխներով) նվիրվել է ժամանակի և դրանով պայմանավորված՝ գրականության ընդհանուր վիճակի քննությանը:

**ա) Կյանքը մահվան քառուղիներում:** Թեև ցեղասպանության «դարաշրջանը» սկսվել և պետական մակարդակի է հասցվել թուրք կառավարության կողմից 1894-1922 թթ. փուլ առ փուլ իրագործված հայոց ցեղասպանությամբ, սակայն դրա արմատները ձևավորվել են շատ ավելի վաղ ժամանակներում: Գրեթե բացարձակ ճշմարտության արժեք ունի այն մոտեցումը, ըստ որի՝ թուր-

քերը, լինելով քոչվոր ցեղեր, ունեին նվաճված երկրներում, այդ թվում և Հայաստանում, թուրքական նոր հայրենիք ստեղծելու, սեփական տարածք ունենալու, այստեղ հաստատվելու գերխնդիր: Այդ պատճառով հենց սկզբից նրանք վարում էին էթնիկական դաժան հալածանքների, կոտորածների, ազգերի ծուլման քաղաքականություն, ժողովրդագրական նկարագրի փոփոխության ձգտումներ: Թուրքերի ազգային գերխնդիրը, հետագա դարերում հասունանալով, ձգվում է մինչև 19-րդ դար՝ որոնելով հարմար առիթ՝ իր վերջնական հանգուցալուծումը ստանալու: Հայկական հարցի ծագումը, ապա նաև վերաբացումը տալիս են այդ հնարավորությունը: Այն թուրքերի համար նվաճված ժողովուրդներին նոր արհավիրքներ պատճառելու առիթ է դառնում, իսկ մեծ տերությունների համար՝ սեփական քաղաքական շահերը առաջ մղելու խաղաքարտ: Հետագայում թուրքական կառավարության հայաջինջ ծրագրի գոյության և իրագործման հաշվենկատ քաղաքականությունը կատարելապես դրսևորվեց 1894 - 96 թթ.:

Սուլթան Աբդուլ Համիդը եվրոպական տերությունների թողությունամբ բացահայտորեն պատժիչ միջոցառումներ՝ մասնավորապես կոտորածներ է իրականացնում Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում: Դրանք իրականում մեծ ցեղասպանության առաջին ակորդներն էին, որոնք իրենց անխուսափելի արձագանքն են գտնում կյանքի ամենաուրբ զգայնաչափի՝ գրականության, մասնավորապես՝ արևմտահայ գրականության մեջ: Եթե մինչև «փոքր եղեռնը» արևմտահայ գրական շրջանակներում, տիրապետող ռոմանտիզմի ուղղությունն էր և, քաղաքականի հետ միասին, սոցիալ - բարոյական խնդիրների քննությունը, ապա դրանցից հետո գրական նոր արտահայտչաձևերի, հերոսի, թեմայի և աշխարհայացքի անհրաժեշտություն է ծնվում: Չնայած 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծության վերելքին, որի մի մասում նոր՝ «փոքր եղեռնի» թեման արծարծվեց ավելի շատ զգայությունների տիրույթում (Սիամանթո, Վարուժան և այլք), և նկատելի դարձան քաղաքական հայացքների փոխակերպումը հոգեբանական դրությունների, բազմազան հոգեվիճակների, կրքերի ու պատկերների, այնուամենայնիվ, բանաստեղծությանը զուգահեռ արեվմտահայ արձակում աղետի թեման քննվեց հոգեբանական և փիլիսոփայական լայն համապատկերում՝ անցնելով գեղարվեստական բարձր նվաճումների արգասավոր ճանապարհ:

**բ) Կենսականության գեղագիտությունը: Անցումը գեղարվեստին:** Դարավերջին քաղաքական բուռն իրադարձությունները, հայ ժողովրդի սոցիալ - քաղաքական անմխիթար վիճակը Արփ. Արփիարյանին ստիպում են գործնական քայլերի դիմելու, փնտրելու ելքեր, լուսավոր ուղիներ՝ դուրս բերելու հայ ժողովրդին փակուղուց, որը հրատապ էր, անհրաժեշտ: Եռանդով, հավատով ու նվիրումով լեցուն մորթոյա առաքյալը՝ Արփիարյանը, գրական նոր սերնդի հետ լծվում է ազգին օգնելու, լուսավորելու, նրան կործանումից, ոչնչացումից փրկելու գործին: Նա ժողովրդի փրկությունը, իրականության վերափոխումը սկսում է կապել գրականության, նրա հասարակական դերի կարևորության և ներգործելու ունակության հետ: Սիայն գրականությունն էր ի գորու լուծելու ստեղծված անելանելի կացությունից դուրս գալու ուղիների խնդիրը: Այդ իսկ պատճառով «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում, որոնք դարձել էին հայ մտքի ու հոգու կարևոր կենտրոններից, առաջնային ու խիստ անհրաժեշտ է դառնում գրականությունը կյանքին մերձեցնելը: Ուստի՝ անհրաժեշտ էր վերափոխել նրա զարգացման ընթացքը, խորացնել բովանդակությունը, հոգեբանությունը, կարևորել հոգեկերտվածքային նոր բնավորությամբ օժտված հերոսի խնդիրը, մշակել նոր ուղղություն, գեղարվեստական նոր թեմա-

ներ (ժողովրդի ինքնագիտակցությունը բարձրացնելու, ընդվզող ուժը կազմակերպելու, հերոսության մղելու) ու ձևեր, ապա մոտեցնել նրան ժողովրդին ու նրա իրականությանը: Սա արտասովոր գրական վերածնունդ էր. ամեն ինչ դըրվում է իրական հողի վրա թե՛ կյանքում, և թե՛ գրականության մեջ:

Առաջանում է նաև գրական նոր ուղղության՝ քննադատական ռեալիզմի կենսագործման հարցը: Այնուհետև նկատվում է, որ Արփիարյանի երկերում զրեմալով ժամանակի հասարակական - քաղաքական իրողությունների, կենսակամության զեղազիտական մեկնությունները դադարում են սոսկ կյանքի վավերականություն լինելուց՝ զեղարվեստում ձեռք բերելով ճշմարտացիության նոր որակներ: Նրա գրական ու քննադատական, հասարակական ու քաղաքական հայացքներն արտացոլվում են **«Կարմիր ժամուց»** վիպակում: Տաղանդավոր գրողը զեղարվեստորեն է արձագանքում իր ժամանակաշրջանի դեպքերին ու իրադարձություններին՝ առաջ քաշելով ժողովրդի բարոյականության պահպանման, նրա գիտակցության «արմատական հեղաշրջման», ազգային միասնության, սեփական ուժի վրա հույսը դնելու, ինքնօգնության, ինքնափրկության, ազգային - ազատագրական պայքարի գաղափարախոսությունները: Արփիարյանը կարողանում է հասնել զեղարվեստի ու գաղափարի միասնության՝ «...չարիքների դեմ բորբոքելով հեղափոխական զգացումներ: Այս սոցիալական ոգին ու շունչը զեղարվեստի լեզվով արտահայտվեցին «Ոսկի ապարանջան» և «Մինչև ե՛րբ» պատմվածքներում, իսկ ազգային - քաղաքական պայքարի տրամադրությունները՝ հոգեբանական խոր հիմնավորում ստացան «Կարմիր ժամուց» վիպակում: Քննադատը և արվեստագետը, ի վերջո, որոշ երկերի մեջ հասան ներդաշնակության<sup>1</sup>:

Վիպակում շեշտադրություններ են նկատվել 1894 - 96 թթ. ջարդերից հետո գաղափարական հայտնությանը նոր տիպի հերոսի, որն ամբողջությամբ նվիրված էր հասարակական - քաղաքական դեպքերի ազդեցությանն ու ազգային լինելիության խնդիրներին, և որի հոգեկերտվածքը դրանց ազդեցությամբ կրթում էր խորն ու անդառնալի փոփոխություններ: Այս դիտանկյունից հարցը չէր քննվել: Այդ հերոսի երկու՝ իրար լրացնող ու իրարամերժ տեսակի ստեղծման առաջին ու հաջողված փորձը՝ հանձինս տեր Յուսիկի և Հայրապետ էֆենդու, կատարեց Արփ. Արփիարյանը «Կարմիր ժամուց» վիպակում: Այստեղ ընդգծվել և կարևորվել է նաև Աստվածաշնչի ազդեցությունը գաղափարական հարցադրումների, հերոսների հոգեբանական փոփոխությունների համապատկերում:

## **Գլուխ երկրորդ** **ՎԱՎԵՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՄԻՋԱՎԱՅՔՈՒՄ**

Այստեղ հետազոտվել է եր. Օտյանի բազմաժանր ստեղծագործությունը դեպքերի վավերականության և զեղարվեստականության միջակայքում: Անդրադարձ է կատարվել նրա հուշագրությանը, հրապարակագրությանը, նորավեպերին և երգիծանքի առանձնահատկություններին: Նկատվել է, որ դրանք մի ներքին օրինաչափությամբ հյուսվում են միմյանց՝ թեմատիկ - գաղափարական կապով և ներքին խաչաձևումներով: Կարևորվել է այն դրույթը, որ այդ երկերում դեպքերի և իրադարձությունների ազդեցության տակ ձևավորվում և զարգանում է նոր տիպի հերոս:

<sup>1</sup> Տե՛ս **Թամրազյան Հր.**, երկեր, հտ. Ա, եր. 2006, էջ 1136:

**ա) Երվանդ Օտյանը՝ ժամանակի վավերագիր:** Եր. Օտյանը, լինելով 1894-96 թթ. ջարդերի ականատեսը, իր հրապարակագրության և գեղարվեստական երկերի նյութ է դարձնում հայոց աղետավոր իրականությունը: Նա դառնում է իր ժամանակի ճշմարիտ վավերագիրը՝ բերելով նորություններ և՛ բովանդակության, և՛ ձևի ասպարեզներում, կերտելով հավերժական ու մնայուն կերպարներ:

Մեծ երգիծաբանը գրական իր ուրույն ոճով և անհատականությամբ, առանձնանալով և տարբերվելով մյուսներից, «փոքր եղեմնի» թեման արտահայտում է այլաբանորեն՝ երգիծելով ու հեզնելով արատավոր երևույթները: Նա ավելի շատ հակված էր աղետալի իրականության մեղավորներին փնտրելու, նրանց իբրև նոր օրերի տիպար բացահայտելու հոգեբանական մեկնությանը: Դրանք քաղաքական գործիչները, հեղափոխականները, քահանաներն ու հայ առաջնորդներն էին, ում անհեռանկար, անհաշվարկ, ու արկածային ծրագրերն էլ ավելի նպաստեցին հասունացող բնաջնջմանը: Նկատվում է, որ սա էլ էր իր ձևի մեջ յուրօրինակ արհավիրք: Այս մտայնությունը գրողն առաջին անգամ արտացոլում է **«Արյունոտ հիշատակներ»** (1898) երկում: Այն Օտյանի վավերագրական առաջին երկերից էր, որում պատկերվեցին աղետալի իրականության գորշ գույները: Վավերագրական - գեղարվեստական երկում ուշադրության է առնվել այն հանգամանքը, որ, դեպքերով պայմանավորված, գրող - հերոսի ներաշխարհում նկատվում են հոգեկերտվածքային փոփոխություններ, հոգեբանական տեղաշարժեր. զոհերի թիվը, սայլերի՝ դիակներով լցվելը, խախտում են հերոսի հոգեկան անդորրն ու հավասարակշռությունը, խռովում հոգին. «Կես գիշերէն յետոյ խցիկս կը մտնեմ ու կը փորձեմ քնանալ, բայց երեւակայութիւնս այն աստիճան գրգռուած է, որ անկարելի կ'ըլլայ աչքս փակել. ցերեկուան տեսարանները մղձաւանջի մը պէս աչքիս առջեւ կուզան»<sup>2</sup>: Նա հոգեկան տրավմա է ապրում<sup>3</sup>:

**բ) Նորոյա «խաչագողության» հայտնությունը:** Հեղափոխության ու հեղափոխականների շնորհիվ հասարակությունը կարող էր իրեն փրկելու փորձ անել, իսկ հեղափոխությունն իրականացնում են միայն անձնագոհները, նվիրյալները. սա հրաշալի գիտեր Օտյանը: Բայց նույնքան հրաշալի գիտեր, որ հեղափոխությունը իր հետ բերում էր ոչ միայն անձնվեր հերոսների, այլև պորտաբույծների, մակաբույծների, մաև զոհերի, ինչը, թերևս, բնական էր: Եր. Օտյանը առաջիններից էր, եթե ոչ առաջինը, ով տեսավ հեղափոխության ընթացքի ժամանակավրեպ լինելն ու անհեթեթությունը, և ստեղծագործության երկրորդ շրջանի երկերում (**«Հեղափոխության մակաբույծները»**, **«Պրոպագանդիստը»**, **«Ընկեր Փանջունի»**, **«Տասներկու տարի Պոլսեն դուրս»** և այլն) երգիծաբանի իր գրիչն ուղղորդեց դեպի այս նոր իրողության համակողմանի բացահայտումն ու հոգեբանական նոր որակների քննությունը: Քաղաքական երգիծաբանը ընտրում է խոր բացահայտումների և ընդհանրացումների ուղին: Օտյանի՝ այս շրջ-

<sup>2</sup> Տե՛ս **Օտյան Եր.**, Արիւնոտ յիշատակներ, «Միքայէլ Տէր Սահակեան» հրատ., Կ. Պոլիս, 1920, էջ 26:

<sup>3</sup> Այս առումով ուշագրավ է Ռ. Ք. Կույունջյանի հոգեբանական այն քննությունը, համաձայն որի՝ «Հոգեվերլուծության տեսանկյունից, տրավման ներկայանում է որպէս կապվածության կրկնվող փորձ՝ իրադարձության մտային կրկնության, կրկնվող մղձավանջների և քնի խախտումների ձեւով: Այդ տրավմայից կախված լինելու պատճառով, ենթակայի գործունեությունը սահմանափակվում է»: Տե՛ս **Կույունջյան Ռ. Ք.**, XX դարի առաջին ցեղասպանությունը. հայկական հիշողության վերադարձը, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2012, էջ 105:



ջանի երգիծավեպերի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հենց 1894 - 96 թթ. ջարդերն են ծնել խաչագողերի նոր տիպեր՝ արտասահմանի գործիչ, խմբագիր, նախկին գործիչ, կեղծ լրտես, պրոպագանդիստ, անվավեր հերոսներ, հակահեղափոխական և այլք: Մինչև ջարդերն էլ սրանք արդեն այլաբնույթ խաչագողեր էին կամ էլ այդպիսին դառնալու ճանապարհին էին: Հեղափոխությունը նրանց դարձրել է նորատեսակ խաչագող՝ մակաբույծ: Այս առումով նուրբ դիտարկումներ է անում Ա. Տերտերյանը՝ Օտյանի «մակաբույծներին» համեմատելով Րաֆֆու «խաչագողերի» հետ. **«Օտյանի խաչագողերը Րաֆֆիի հերոսների գործելակերպով չարաշահում են՝ ոչ թե կրոնը, այլ «սուրբ գործը»:** Օտյանը մերկացնում է այդ **նոր խաչագողերին՝** «իսկական հերոսներին» վարկը ավելի ևս բարձրացնելու և փառաբանելու համար»<sup>4</sup> (այս և հետագայում հանդիպող բոլոր ընդգծումները մերն են – **Ն. Ա.**): Վերոնշյալ դրույթի ճշմարտացիությունը ապացուցելու համար դիտարկվել են Րաֆֆու դիպուկ բընութագրումները. «խաչագողին չէ կարելի տեսնել իր բուն պատկերի մեջ. այլեվայլ երկրներում, գործի և հանգամանքների այլևայլ պայմանների համեմատ, նա միշտ **նոր ձև և նոր կերպարանք է ընդունում:**

խաչագողը բովանդակում է իր մեջ **մարդկային ամբողջ հասարակության բնավորությունները:** ... խաչագողը նայում է տիեզերքի վրա որպես իր հունձքի արտի վրա: ... Նա չէ ցանում, բայց հնձում է»<sup>5</sup>:

Երգիծավեպերում նկատվում է, որ Օտյանը դեմ էր տարերային, անհեռատես հեղափոխությանն ու կեղծ հեղափոխականներին և գտնում էր, որ հենց նրանք մի նոր աղետի պատճառ դարձան և ներսից քայքայեցին, բաժանեցին ժողովրդին՝ իրենք էլ դառնալով դրա զոհը: Մյուս կողմից՝ գրողը մատնանշում է, որ այդ արատավոր երևույթների առաջացումն ու կեղծ գործիչների ի հայտ գալը որոշ իմաստով պայմանավորված էին նույն հասարակության բաց ու թերի կողմերից: Հենց այստեղ է, որ Օտյանը փորձում է ցույց տալ, պատճառաբանել խնդիրի երկրորդ՝ նուրբ ու հոգեբանական կողմերը: Նա ներկայացնում է ժողովրդի՝ իբրև այդ անորոշ ու հուսախաբ օրերին իր Հերոսին, իր Փրկչին սպասողի պարզունակ մտածողությունն ու հոգեբանությունը: Սպասելով Փրկչին՝ նրանք մեկ այլ ծայրահեղության մեջ են ընկնում. հավատում են ցանկացած ստի ու սուտ գործչի, որը նախ՝ զալիս էր հուսահատությունից, ապա՝ պայմանավորված էր ժողովրդական հոգեկերտվածքին բնորոշ դյուրահավատությամբ, ինչն էլ հաճախ նրան մղում է ամբոխացման. «երբ որ Կարպիս կուգա Ալեքսանդրիա, ոչ մեկուն մտքեն կանցնի հարցնել իրեն, թե **«Դո՞ւ ես, որ զալոցն ես, եթե այլում ակն կալցուք»:** Եկած վայրկյանն անվիճելի, անկասկած հերոսներեն մեկը կըլլա»<sup>6</sup>: Միևնույն ժամանակ՝ չարի բռնապետությունը ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեբանական մի ներքին ազդակով «հալածում» էր ժողովրդի երևակայությունը, միտքն ու հոգին, տանում հոգեկան խեղաթյուրման. սովորական երեվույթները հոգեբանորեն վերածում էին անսովորի, թվացյալը՝ իրական էր դառնում՝ փոխելով իրականության ճշմարիտ զգացողությունն ու գնահատումը: Նկատելի է, որ սրանք են թերևս այն հիմնական պատճառները մեկը դառնում, (ժողովրդի ծանր վիճակը, նրա խաթարված ու բզկտված ներաշխարհը), որոնցից ծնունդ են առնում, սնվում ու օգտվում մակաբույծները. «Հախուռն հույսե-

<sup>4</sup> **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, «Պետական համալսարանի» հրատ., Եր., 1944, էջ 66:

<sup>5</sup> **Րաֆֆի**, խաչագողի հիշատակարանը, Կայծեր, Եժ, հտ. 5, «Սովետական գրող» հրատ., Եր., 1985, էջ 8 - 9:

<sup>6</sup> Տես **Օտյան Եր.**, Հեղափոխության մակաբույծներ, Եժ, հտ. 1, «Հայպետհրատ», Եր., 1960, էջ 409:

րու, աչքափակ վստահության, հարաճուն ոգևորության շրջանն էր տակավին: **Չունձը առատ էր և մշակները սակավ**<sup>7</sup>:

զ) Աղետի դիմակայության օտյանական բանաձևը: Տարագրության տարիներին էր. Օտյանը իր տեսած, զգացած կյանքից հյուսում է մի շարք գեղարվեստական պատմվածքներ ու նորավեպեր, որոնք ինքնակենսագրական և վավերագրական հիմքեր ունեին: Նկատվել և կարևորվել է այն հանգամանքը, որ եթե երգիծավեպերում և հուշագրության մեջ Օտյանը չի գտնում իր «փնտրած հերոսին» քաղաքական դաշտում, ապա պատմվածքների և նորավեպերի մեջ (**«Աղոթք»**, **«Լևոն թագավորի սուրը»**, **«Չաշտություն»**, **«Այրին»** և այլն) պատկերում է իսկական հեղափոխականներին՝ նոր՝ արթնացումի, պայքարի ոգեկոչման հերոսներին՝ հակադրելով նորօրյա խաչագողներին: Մեծ գրողի՝ նորավեպերում կերտած հերոսները կարողանում են թոթափել արհավիրքի հոգեբանական «աղետները» և ուժ են գտնում հավաքվելու ու պայքարելու հանուն կյանքի ու հարատևության: Նրանք ընտրում են դիմադրության, ըմբոստացման ուղին. «Եթե զենք մը ըլլար, աղբարս չէր մեռներ... ապուշ էինք... զենք մը չէինք - ահած քովերնիս ... բայց սակե ետքը, այս սուրին վրա երդում կընեմ, առանց զենքի չի պիտի պտըտիմ»<sup>8</sup>:

### Գլուխ երրորդ «ՎԵՏԻ ԾԻԾԱՂԻ» ՊԱՐՏԱԳՐԱՆՔԸ: ԱՌԱՆՁՐ

Երրորդ գլուխը նվիրվել է Առանձարի ստեղծագործության մեկնությանը, որն արտացոլում է իր ժամանակաշրջանի ողբերգականության «զավեշտով լի» դրսևորումները: Մեծ դեպքերի ջահել ակնաստեղը, այրունոտ տեսիլներից ազդված, տենդոտ մտքով ու հոգով լծվում է արհավիրքի ներքին պատճառների որոնմանը, և դրանց հոգեբանական անդրադարձին իր ժողովրդի հոգեբանության ու հոգեկերտվածքի վրա: Այս առումով մի բացառիկ ժողովածու է **«Վշտի ծիծաղ»**-ը, որում զետեղված նորավեպերն աչքի են ընկնում ազգային ողբերգության հանդեպ ուրույն մոտեցմամբ, արտացոլում ջարդերի հետևանքով ստեղծված մղձավանջը թե՛ իրական, թե՛ հոգեբանական դաշտում: Առանձարը նկատել և պատկերել է օտարի բռնության ճիրաններում տառապող մարդու հոգու դրաման:

**«Բուրդի վաճառականություն»** նորավեպում Առանձարը փոքր միջադեպի ներկայացմամբ արծարծում է ազգային մեծ ու ցավոտ խնդիրներ: Նա փոքր զավեշտ թվացող, սակայն հիմքում դրամատիկ իրողություններ պարունակող

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 286: Ուշագրավ է, որ Օտյանը իր ժամանակաշրջանի քաղաքական մթնոլորտը բնութագրում կամ իմաստավորում է աստվածաշնչյան հայտնի ատյւթներից մեկով. «Եւ տեսնելով ժողովրդի բազմութիւնը՝ Յիսուս զթաց նրանց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած, ինչպէս ռչխարներ, որոնք **հովիւ չունեն**: Այն ժամանակ իր աշակերտներին ասաց. **«Չունձը առատ է, իսկ մշակները՝ սակաւ: Արդ, աղաչեցէք ինձի Տիրոջը, որ մշակներ հանի իր ինձի համար»**: (Տե՛ս Աստվածաշունչ, Մատթոս 9. 36 - 38, Էջմիածին, 2001): Սակայն սուրբգրային այս խոսքերը մի փոքր այլ ենթատեքստ ունեն Օտյանի երկում. դրանք ձեռք են բերում գեղարվեստական արժեք, մի տեսակ հեզանական երանգավորում՝ ուղղված քաղաքական անառողջ մթնոլորտի պարտադրած նոր հոգեվիճակին, որից դեռ նոր պետք է օգտվելին կեղծ «մշակները»: Մյուս կողմից՝ երգիծաբանը գրեթե անընկատ ցույց է տալիս այն, որ Չովիվ չունեցող ժողովուրդը միշտ էլ բախվելու է «նոր մշակների» հայտնության փորձությանը:

<sup>8</sup> Տե՛ս **Օտյան եր.**, Լևոն թագավորի սուրը, Եժ, հտ. 1, «Չայպետիրատ», Եր., 1960, էջ 467:

միջադեպի մեջ նույնպես յուրօրինակ բնաջնջման վտանգ է տեսնում: Բուրդի վաճառականությունը դառնում է միջոց ոչ միայն ջարդերից հետո հայի ծանր ու անելանելի վիճակը ցույց տալու, այլև թշնամու հոգեբանությունը, նրա անփոփոխ ներաշխարհի քարացածությունը բացահայտելու համար: Դեպքերով պայմանավորված՝ Առանձարը նկատում է հոգեկերտվածքային փոփոխություններ ինչպես հայ մարդու, այնպես էլ թուրք ժողովրդի հոգեկերտվածքի մեջ: Իբրև նորավեպի էական առանձնահատկություն՝ դիտարկվել է այն, որ տաղանդավոր գրողը ներկայացնում է ոչ միայն տիպիկ թուրք պաշտոնյային ու միջնորդ մարդկանց, այլև հայտնաբերում թուրքական իրականության նոր ժամանակների թուրք խաչագողերին, որոնք, ստեղծված իրադրությունից օգտվելով, կողոպտում էին բազմաչարչար հայ ժողովրդին՝ ամենատարբեր մեկնություններով հանդես գալով օրենքի անումից. «Գիշերները շուայտութեանց մեջ լուսցնող, ուժասպառ, ախտաւոր, աղեղած, կառավարական քեաթիպի այդ աննման նմոշները՝ առանձին դասակարգ մը և պորտաբոյժներու վերջապահ գունը կը գրաւեն թուրք կառավարութեան մեջ, և առանձնապէս շահեկան է անոնց ուսումնասիրութիւնը: ... Եւ արդէն ա՛ս է ամբողջ յաջողութիւնն ու միակ գործը՝ Արուեստագէտին»<sup>9</sup>, - դիպուկ կերպով նկատում է Ռ. Ջարդարյանը:

**«Մուրուքի սանտր»** նորավեպը արտացոլում է արևմտահայության սոցիալ - քաղաքական, հոգեբանական ճնշման ընդհանրացված պատկերը: Ինչպես նախորդ նորավեպում, Առանձարը այս նորավեպում ևս ցույց է տալիս բարոյագուրկ թուրք պաշտոնյաների վայրագություններն օրինականության քողի տակ, որն ամենագոր և ամենակարող է միայն խեղճերի ու իրավագուրկների հանդեպ. «...կարծես թե դեռ վիճաբանելիք խնդիր մը ըլլար պատկառելի, սուրբ մոլլայի մը և... հայ խանութպանի կտորի մը համեմատությունը, հա՛, հա՛, հա՛, հա՛. ինձի նայե, **դուք շատ երես եք առեր, ձեր չափը վաղուց մոռցեր եք, բայց ես ձեզի նորեն այնպես մը սորվեցնեն ձեր չափը, որ հավիտյան չմոռնաք»**<sup>10</sup>: Սա գալիք մեծ աղետը իրագործելու ոչ միայն նախահիմքի վկայությունն է, այլև թուրքական այն ենթագիտակցության ապացույցը, որ նման ընդգրկման հանցանք իրենարավոր եղավ իրագործել զուտ միայն այն պատճառով, որ հիմնական գործիքը հենց թուրքն էր:

Արևմտահայ կյանքի ողբերգության, մասնավորապես 1894 - 96 թթ. աղետալի դեպքերի մի դրվագ է **«Կախադանեն... ամուսնություն»** նորավեպը: Վերնագիրն արդեն իսկ հուշում է երկու ծայրահեղ բևեռների՝ զավեշտի և ողբերգականության դրամատիկ ընթացքը: Նկատվում է, որ այն խնդիրները, որ բարձրացնում է Առանձարը երկում, թուրք պաշտոնյաների զրպարտությամբ, կաշառակերությամբ չի սահմանափակվում: Փաստն այն է, որ պաշտոնյաներից յուրաքանչյուրն ունի ոչնչացնելու իր մոլուցքն ու տեսլականը, ցեղասպանի յուրօրինակ մտածելակերպը, ըմբռնումը և դրան համապատասխան գործադրությունը. «ախ, իմ ձեռքս տային, **ցիցի վրա կնստեցնեի կամ արքանով մը միսեն ամեն օր մեկ կտոր կփոցնեի և կամ ավելի լավը»**<sup>11</sup>: Մինևույն ժամանակ՝ Առանձարը մատնանշում է մեկ այլ՝ մարդու ոչնչացմանը նպաստող պատճառներից մեկ երկուսի՝ տարօրինակ քաղաքակրթության, գիտության մասին, որոնք ի զորու են ավերելու ամեն ինչ. «Նոր քաղաքակրթությունը ուրիշ շատ մը բաներու հետ **ջարդերն ալ դյուրացուց»**<sup>12</sup>:

<sup>9</sup> Տե՛ս **«Ռազմիկ»**, Բուլղարիա, 1906, թիւ 52, ապրիլ 29, էջ 2:

<sup>10</sup> Տե՛ս **Առանձար**, (Թվկատիմցի, Բաշալյան, Առանձար), Երկեր, Եր., 1984, էջ 486:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 516:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 514:

**«Երկու պատկեր»** նորավեպում Առանձարը շոշափում է ջարդի բերած հետեվանքների հոգեբանական ու թուրքական հոգեմտածական խնդիրները: Նորավեպի էպիկենտրոնը համազգային արհավիրքն է, որում հոգեբանական ու գեղարվեստական, ինչո՞ւ չէ՝ փիլիսոփայական բարձր մակարդակով պատկերվում են ստեղծարար ու շենշող ժողովրդի հոգեկան մղձավանջները: Ի դեմս թուրք «աստվածակերտիչ» նոր՝ Ֆաթմայի կերպարի, իր թռռան հոգեկերտվածքի մեջ գերմարդու ներարկման, Առանձարը պատկերում է այն միջավայրը, որում ծնվում է ցեղասպանության հոգեբանությունը, հակումը: Ուշագրավ է այն, որ նորավեպի առաջին պատկերի երեք դեպքերում էլ զարգանում է մարդասպանության անբարո ընթացքը: Նրանք դառնում են պատժող չաստվածներ, ձևավորվում՝ իբրև մարդկության դահիճներ:

**«Հոգու համար»** նորավեպում Առանձարը ներկայացնում է իրականության մեկ այլ պատկեր: Նա ցույց է տալիս ազգի ցավին անտարբեր, վախվորած ու անձնապաշտ հայ վերնախավին, որ շատ քիչ է տարբերվում արտաքին թշնամուց: Այս խնդիրը Առանձարից առաջ արժարծել էին դեռ Արփի Արփիարյանը, Եր. Օտյանը և այլք: Սակայն գրողը այս թեման կարողացավ էլ ավելի խորացնել և հոգեբանական տեսանկյունից, և՛ գեղարվեստական: Այս ծավալուն նորավեպում նա կարողացել է ընդհանրացնել արևմտահայ հարուստ վաճառականների տիպիկ և ընդհանրացնող բնութագիրը, հոգեբանությունը, որոնք անտարբեր էին համազգային մղձավանջին:

**«Վշտի ծիծաղը»** նորավեպը արհավիրքի հոգեբանական հետևանքի, ազգային վշտի, ժողովրդի անհուն տառապանքի գեղարվեստական, հոգեբանական ու փիլիսոփայական իմաստավորման մի կատարյալ կերտվածք է:

**«Փրկիչները»** առաջին քաղաքական դրաման է, որի նյութը հայ հեղափոխական կուսակցությունների գործունեությունն է և նրանց ներքին խնդիրների վերհանումը: Առանձարը խորացնում և ընդլայնում է նախորդների (Եր. Օտյանի, Մ. Կյուրճյանի) ստեղծած գեղարվեստական փորձը: Նա ներկայացնում է ազգային - ազատագրական պայքարի նվիրյալների ոչ միայն թուրքական դաժան լծից ժողովրդին ազատելու գործունեությունը, այլև ազգային վշտի նրանց տարբեր ընկալումները և դրանից ծնունդ առնող գաղափարները: Գրողը ցույց է տալիս, որ հեղափոխական կուսակցությունն իր անկազմակերպվածությամբ, անձնական նկրտումներով ու արկածախնդրությամբ մի կատարյալ պատուհաս է դառնում ֆիզիկական բնաջնջման առջև կանգնած ժողովրդի գլխին: Ուստի՝ նկատվում է, որ Առանձարը Արփի Արփիարյանի, Եր. Օտյանի պես կողմ էր ազատագրական պայքարին և գտնում է, որ ֆիզիկական բնաջնջումից փրկվելու միակ ելքը ժողովրդական կենսունակ ուժերի կազմակերպումն է, որի պոտենցիալը ավելի է մեծ, քան կուսակցությունների որդեգրած գիծը կարող էր ապահովել:

## **Գլուխ չորրորդ** **ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ԱՐԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ**

Չորրորդ գլուխը նվիրված է Երուխանի և Ս. Պարթևյանի ստեղծագործության քննությանը, այս երկու գրողների՝ գաղթականության թեմայով ստեղծագործություններին: Ե՛վ Երուխանը, և՛ Ս. Պարթևյանը խնդիրը քննում են տարբեր մոտեցումներով, տալիս ազգային հոգեկերտվածքի աղավաղման տարեգրությունը: Նրանք բազմապլան մոտեցումներով բացահայտում են գաղթական հա-

յի՝ աղետալի իրականությամբ պայմանավորված հոգեկերտվածքային փոփոխությունները:

**ա) Ցեղային ոգու հարատևման Ջանգահարը: Երուխան:** Երուխանը 1894-1896 թթ. ջարդերից հետո նոր որակի է հասցնում պանդխտության թեման՝ ըընճելով ու բացահայտելով ոչ միայն մինչ այդ գաղթականությանը բնորոշ սոցիալ - բարոյական խնդիրներ, այլև իրադրությամբ պայմանավորված՝ հոգեբանական ու հոգեկերտվածքային նոր իրողություններ, որ պակասում էր ժամանակի գրականությանը: Նա, թերևս, այն բացառիկներից է դառնում, ով ուսումնասիրում է հայտնաբերում է զանգվածային ջարդերից՝ մահվան մղձավանջից փրկված հայության, մասնավորապես՝ գաղթական հայության կյանքի հետնաբեմը, ինչպես և այն, որ գաղթական հայը արդեն նոր հոգեկերտվածքի կրողն էր: Երուխանը գնում է ազգային հոգեբանության տիպաբանական յուրահատկությունների ուսումնասիրության ճանապարհով: Վկան՝ «Գաղթականները» անավարտ վեպն է, նաև գաղթականության թեմայով նորավեպերը («**Ինքնօգնությունը փոքրիկներուն վրա**», «**Կեվրեքճին**», «**Օղորնություն մը**», «**Արյան ուժը**», «**Սայլորդը**», «**Կտակը**» և այլն), և այն հողվածները, որոնցով համոզես է գալիս Երուխանը «**Շավիղ**» հանդեսում:

«Շավիղ» պարբերականը իսկապես շավիղ՝ ճանապարհ է մատնանշում ոչ միայն գաղթահայության համար, այլև հենց իր՝ Երուխանի՝ նոր գրական երկերի ստեղծման համար: Հանդեսում ուրվագծվում է այն կարևոր իրողությունը, որ արհավիրքից մի կերպ փրկված գաղթական հայությունը օտար հողի վրա կրկին կանգնած էր բնաջնջման եզրին: Իսկ գաղթականությունն իբրև իրողություն՝ ինքնին արդեն մի յուրօրինակ կոտորած էր: Այս դաժան իրականության համար Երուխանը մեղադրում է դատապարտում է սուլթան Աբդուլ Համիդին, ինչպես նաև եվրոպական տերությունների վարած երկդիմի քաղաքականությունը: Սյուս կողմից՝ գաղթականության մեջ ազգային անբիծ նկարագրի քայքայումն ու բարոյական հզոր հատկանիշների անհետանալը, համաճարակի պես ընդլայնվելու հատկություն ունեին: Ուստի՝ դրսի իրականության մեծ տրպավորությունների տակ Երուխանը կարևորում է հայապահպանության մի էական գիծ՝ ազգային բարոյական պահպանումը, որը գաղթականության համար կարող էր փրկության միակ ուղին դառնալ: Սրա պահպանումը հիմք կարող էր լինել նաև աշխարհի համակարգը շահելու և դրանում ազգային բախտորոշ հարցերը հօգուտ իրենց լուծելու համար: «Շավիղում» արծարծված այս խնդիրները գեղարվեստական լայն պլանով արտացոլվում և գաղափարական հենք են դառնում Երուխանի վեպի և պանդխտությանը ծնված նրա նորավեպերի համար: Այդ է թերևս պատճառը, որ վերջինները նաև միտում ունեին. դրանք հայերի հոգեկան անաղարտության, բարոյականության, աշխատասիրության և պարտականությունների սրբորեն պահպանման, ուժացման վտանգին կուլ չըզանալու և ցեղային հոգեկերտվածքին հարազատ մնալու հարցերն են: Սևա այսպես է տարագիր գրողը դառնում ուղեկորույս ժողովրդի դանթեական ճանապարհի ճշմարիտ տարեգիրը:

**բ) «Հայրենի քայքայումի փոթորկի» մեկնիչը: Սուրեն Պարթևյան:** Ս. Պարթևյանը արևմտահայ գրականության մեջ այն դեմքերից էր, որ գրեթե ամբողջությամբ տվեց դարավերջի և դարասկզբի աղետալի դեպքերի առաջ բերած ծանր ու անդառնալի հետևանքների համապատկերը՝ միաժամանակ կերտելով նաև դրանց արդյունքում նոր գծեր ու բնավորություն, նոր հոգեկերտվածք ձեռք բերող ժամանակի հայի կերպարը: Ս. Պարթևյանը, տեսնելով 1894-96 թթ. ջարդերի սարսափն ու բնաջնջման մղձավանջը, հարազատ ժողովրդի

հոգեկան տվյալտանքներն ու հուսահատությունը, նպատակաուղղվում է այն-պիսի գրական երկերի ստեղծմանը, որոնք, թեև գեղարվեստորեն օրերի գրականությանը զիջող, սակայն հզոր էին իբրև աղետալի ժամանակաշրջանի զգալություններ, տիրող հոգեբանության վկայություններ՝ իբրև դրանց անկեղծ տարեգրություն: Նրա թե՛ «**Քայքայում**», թե՛ «**Հայուհին**» ժողովածուները 1894 - 1896 թթ. զանգվածային ջարդերի, գաղթականության, տառապանքի, բարոյական ու հոգեկան անկունների, ցավի շահարկման, հոգեորսության, ինչպես նաև աղետի դիմակայության, հակազդեցության գեղարվեստական անդրադարձներ ու արձագանքներ են: Սրանցում արժևորվում են հատկապես հոգեբանական ու հոգեկերտվածքային նոր իրողությունների բազմակողմանի դիտարկումները:

Մյուս կողմից՝ Պարթևյանը նկատում է, որ այդ աղետալի երևույթները միայն ջարդերով պայմանավորված իրողություններ չէին, այլ շատ չափով բխում էին հայ մարդու փոփոխվող և աղճատվող հոգեկերտվածքից. ծուլության, փառասիրության և այլաբնույթ վատ հակումները, որոնք օտար միջավայրում ու պարտադրանքով նպաստավոր հող գտան, վտանգեցին հայն ու հայկականը, բարոյազրկեցին նրան: Այստեղ տեղին է դառնում վկայակոչելու հզոր փիլիսոփայագետ Ֆեոդարի Քեսսիդի մի դիպուկ մեջբերումը, համաձայն որի՝ ազգի բնավորությունը նրա ճակատագիրն է<sup>13</sup>:

### **Գլուխ հինգերորդ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՆ ՈՒ ՍՏՎԵՐԸ**

Այս գլխում ուսումնասիրված են ջարդերի հետևանքով ձևավորված նոր հերոսի հոգեբանական դրամայի պատկերման խնդիրները (Զ. Թլկատինցի, Ռ. Ջարդարյան, Տ. Չյոկյուրյան): Միևնույն ժամանակ՝ քննվել են աղետին դիմադարձ կանգնող հերոսական հոգեկերտվածքի պատկերումները (Լ. Բաշալյան, Ռ. Ջարդարյան, Տ. Չյոկյուրյան, Ս. Պարթևյան, Ս. Պոտուրյան, Մ. Սվաճյան, Վ. Թեքեյան)՝ իրենց ներքին ընդհանրությունների, նաև յուրահատկությունների մեջ:

**ա) Նոր հերոսի հոգեբանական դրաման:** Ջարդերի հետևանքով ստեղծված ծանր իրավիճակը, սոցիալական խորացող դաժան կացությունը նոր թեմա են դառնում Հոփի. Թլկատինցու ստեղծագործություններում: Դրանք ոչ միայն ժողովրդական ինքնատիպ մտածողությամբ ու կենսափիլիսոփայությամբ հարուստ ռեալիստական երկեր են, այլև գյուղական կյանքի, գյուղի մարդու հոգեկերտվածքի ու փոփոխվող, ավելի ճիշտ՝ ավերակվող հոգեբանության գեղարվեստական արտացոլքեր: «**Ա՛խ, Աստվա՛ծ, Աստվա՛ծ**» քրոնիկում Թլկատինցին խոր ցավով է գրում հայ կնոջը բաժին հասած դառը ճակատագրի, լուռ տառապանքների, սոցիալական ծանր վիճակի, արհավիրքի դեմ նրա անզորության ու սնոտիապաշտության մասին: Նա տեսնում է, որ անընդհատ կրկնվող արհավիրքները ավերում են գյուղի մարդու ներաշխարհային գեղեցկությունները, խաթարում բնության հետ խաղաղ ապրելու ներդաշնությունը: Սակայն հայ մարդը, դրանով համոզեմ, չի կորցնում հարատևելու հավատը: Իսկ «**Մահվան տարին**» քրոնիկում Թլկատինցին իր մեծ ժամանակակիցների նման ցավով արձանագրում է, որ ջարդերը, մահերն ու սարսափները փոխում են ժողովրդի հո-

<sup>13</sup> **Кессиди Ф. Х.**, Философские и этические проблемы генетики человека, «Мартис» изд., М., 1994, էջ 108:

գեկերտվածքը՝ դարձնելով նրան կրավորական, ճակատագրապաշտ ու խոնարհ:

1894 - 1896 թթ. ջարդերին անդրադարձավ մահ Ռ. Ջարդարյանը: Նրա այդ շրջանի արձակը կարևորվում է նրանով, որ բերում է եղեռնագործի վայրագությունների, դրանով պայմանավորված՝ տառապող անհատի ու պայքարող ոգու հայտնությունը, և, դրանով պայմանավորված, դարձի ու կատարելացման ուղիները չկորցնելու հարցը:

Ջարդարյանի երկերը, հագեցած խոր հոգեբանությամբ, ցրված էին ժամանակի հայտնի պարբերականներում («Արևելք», «Շիրակ», «Ծաղիկ», «Ռագմիկ», «Ազատամարտ» և այլն), որոնց մի մասը հավաքեց և ամբողջացրեց **«Ցայգալոյս»**-ում՝ 1910 թ-ին: Ժողովածուում հոգեբանական խոր դրամայի խնդրի պատկերմամբ առանձնանում է **«Տան սերը»** նորավեպը: Այն յուրօրինակ ու խորիմաստ երկ է՝ հագեցած մեծ կենսափիլիսոփայությամբ:

Ռ. Ջարդարյանի արձակում մայրը՝ իբրև կյանքի ու ցեղի պահպանության ու հարատևման հիմնական խորհրդակիր, հաճախ է հանդես գալիս: Սոր հոգեկերտվածքի, հոգեբանական բազմազան որակների դրսևորումներն է քննում և հայտնաբերում Ջարդարյանը իր արձակի գրեթե ողջ գեղարվեստական ընդգրկումներում: Այս առումով գեղարվեստական կատարյալ երկեր են դառնում **«Պուտ մը ջուր»**, **«Տերտերին հարը»**, **«Նահանջը»**, **«Շուն մըն ալ պակաս»**, **«Ձղջումը»**, **«Մարն զմանուկը մոռցավ»**, **«Սև հավը կանչեց»**: Սրանցում նկատվում է, որ Ջարդարյանը մայրական բնազդից ու տաք սրտից զորավոր է համարում ժամանակը, որ խեղդում ու ոչնչացնում է անխելելին ու անոչնչացնելին:

Նոր հերոսի հոգեբանական դրամայի խնդիրը արծարծեց մահ Տ. Չյոկյուրյանը: Նա մյուսներից տարբերվեց այնքանով, որ ինքնատիպ եղավ նախընտրած թեմայի մեկնաբանության մեջ: Չյոկյուրյանը նրբին թափանցումով, յուրահատուկ գեղարվեստով է պատկերում նոր, ավերակված հոգեկերտվածքների ձևավորման ողբերգականությունը: Այս առումով առանձնանում են հատկապես **«Վանքը»** վիպակը և **«Տերտերին ոճիրը»** նորավեպերը: Սրանցում նկատվել է, որ ազգային դժբախտությունը, տևական ոճրագործությունները ի վերջո անդրադառնում են անհատի ներաշխարհի վրա՝ դատապարտելով երկյուղի, տագնապի, հուսահատության ու թերաթժեքության բարդույթի, մահ ոճրագործության: Հերոսը ներքին դրամա է ապրում: Հայը մարդը կամ անհատն առհասարակ, ազգային ճակատագրի ճնշման, թշնամու ոճրագործության ազդեցության տակ այդպես էլ չի կարողանում գտնել այն ներքին ազատությունն ու խաղաղությունը, որ կիսներ նրան ներքին բարդույթներից և երջանիկ կյանքի զգացողություն կապահովեր: Չյոկյուրյանը խոր ցավով նկատում է, որ իմացության դարում ապրող մարդը, չնայած հասել է կոզևոր զարգացման առավել բարձր մակարդակի ու գիտակցականության, այնուամենայնիվ, սպանում է մարդու<sup>14</sup>: Տաղանդավոր գրողը գեղարվեստական մեծ վարպետությամբ ցույց է տալիս կյանքի սպանության անհեթեթության ու մարդու անիմաստ կորստյան դրաման:

**բ) Հավերժի ուղիների որոնումներում:** Լ. Բաշալյանի **«Կաղանդ»** և **«Ցեղին ձայնը»** երկերը եղեռնի գրականության առաջին գեղարվեստական արձագանքներից են, որտեղ արտասովոր հուզական էներգիայով, կենսասիրությամբ ու

<sup>14</sup> Ֆ. Քեսսիդին, գիտականորեն ուսումնասիրելով մարդկային հոգեկերտվածքին վերաբերող մի շարք խնդիրներ, հենվելով հույն փիլիսոփաների (հատկապես Թուկուդիտի) դատումների վրա, համզում է այն եզրակացության, որ մարդկային բնությունը մնում է անփոփոխելի: Տե՛ս **Кеццуду Ф.**, Φιλοσοφικες и εθιμικες προβληματς γενετικης του человека, «Μαρτυς» ս.ձ., Մ., 1994, էջ 43:

լավատեսությամբ, Բաշալյանը ուղենշում է աղետի բերած ծանր հետևանքների հաղթահարման ճանփաները: Նա առաջ է քաշում տիրող ծանր ժամանակի ընթացքում պայքարելու միակ ու անփոփոխ միջոցը՝ խելքը, որ ուրույն զենքն էր անհետացման, մահվան դեմ կռվելու:

Ռ. Ջարդարյանը իր արձակում նույնպես, բացի աղետից հալածված, տառապող հոգու ներաշխարհը պատկերելուց, քննում է նաև ցեղային հոգեկերտվածքի չմեռնող որակներ, հայտնաբերում ցեղային նախատիպի հայտնությունը: Այս թեմայով երկերից են **«Ցեղին զավակը»**, **«Սարերու տղան»**, **«Գամփռ»**, **«Եկեղեցու առյուծը»** և այլ երկերը: Ջարդարյանը գովերգում է մաքառող հոգիների՝ վտանգի հանդեպ ունեցած վեհացնող անտարբերությունը և մահվան հանդեպ նրանց ունեցած գերագույն արհամարհանքը:

Պայքարող անհատի հերոսական ոգու առեղծվածն է բացահայտում նաև Տ. Չյոկյուրյանը: Տ. Չյոկյուրյանի նորավեպերում՝ **«Լուռ հերոսը»**, **«Հարսին վրեժը»**, **«Մեր ուժը»**, հերոսականությունը հանդես է գալիս տարբեր դրսևորումներով և բազմակերպ է: Այստեղ չկան ֆիզիկական առևնով իրական հերոսներ, ասենք՝ հայդուկներ, բայց կան խորհող ու զգայուն անհատներ, որոնց կյանքն ու արարքը նույնպես ողբերգական է ու հերոսական՝ պայմանավորված անողոր ժամանակաշրջանով:

Ս. Պարթևյանը ևս իր գրականության մեջ անդրադարձել է ցեղային ոգու հարատևության առեղծվածը բացահայտելու խնդրին: Նա, աղետից հետո առաջացած ծանր իրավիճակի, զաղթական դարձած հայի նոր հոգեվիճակը պատկերելուց զատ, ցույց է տալիս անհատի հոգեբանական դիմակայությունն ու բարոյական պայքարը աղետի հանդեպ: Այս առևնով արտասովոր են **«Սայքը»**, **«Արյունին հաճախանքը»** նորավեպերը, որոնք «Հայուհին» ծողովածուի ամենատպավորիչ և հոգեբանական երկերից են:

1894 - 1896 թթ. զանգվածային ջարդերի, սարսափի ու երկյուղի, մղձավանջի, նաև դիմադրության ու դիմակայության գեղարվեստական արձագանքների դրսևորումներ նկատվեցին Մ. Սվաճյանի, Վ. Սվաճյանի, Ս. Պոտուրյանի, Վ. Թեքեյանի ստեղծագործություններում: Չնայած գեղարվեստի էական պակասին՝ գաղափարի իմաստով վրանց ստեղծագործությունները ևս գալիս էին վրկայելու, որ հերոսի տեսակի և թեմայի փոփոխության վերաբերյալ գրական աշխարհի մտայնությունը ընդհանրական էր:

## ԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրությունը հանգեցրել է հետևյալ եզրակացություններին.

1. Ականատեսների, գիտնականների, վերապրող գրողների վկայակոչած փաստերի և հետազոտությունների, ՄԱԿ-ի՝ 1948 թ. ընդունած Ցեղասպանության բանաձևի հիման վրա եկել ենք այն եզրահանգման, որ 1894 - 1896 թթ. իրադարձությունները «ջարդեր» որակելը մեղմ, ավելի ճիշտ՝ սխալ մոտեցում է: Դրանք իրականում մինչև 1923 թ. տևած Մեծ ցեղասպանության առաջին ակորդներն էին, որոնք պայմանականորեն անվանել ենք «առաջին կամ փոքր ցեղասպանություն»՝ նկատի ունենալով 1915 թ.՝ իբրև Ցեղասպանության բարձրակետ: Բազմաթիվ օրինակներով փաստվել է, որ սրանցում նաև իրենց մեղքի բաժինն են ունեցել եվրոպական տերությունները: Այսպես, օրինակ, Ֆրանսիայի և Անգլիայի վարած քաղաքականության փոփոխությունը՝ պայմանավորված Ռուսաստանի հետ շահերի բախմամբ, վճռական դեր խաղաց թուրք կառավարողների համար՝ իրագործելու իրենց հղացած ոճրագործությունը:



2. Հայտնի ճշմարտությունը, թե գրականությունը հասարակական կյանքի ամենանուրբ և արագ արձագանքող զգայնաչափն է, աներկբայորեն դրսևորվեց 1894 - 96 թթ. առաջ և ընթացքում: Արփ. Արփիարյանը՝ որպես 80-ականների գրական սերնդի ոգեշնչող և առաջնորդ, կարևորեց կյանքի ճանաչողության և հոգեկերտվածքային նոր բնավորությամբ օժտված հերոսի խնդիրը: Նրա «Կարմիր ժամուց» վիպակը արևմտահայ գրականության առաջին օրինակն էր, որը, իբրև հանուն ազատության պայքարող հերոսի, ներկայացրեց Տեր Հունսիկի, իսկ որպես վերափոխվող հերոսի՝ Հայրապետ էֆենդու կերպարների մասին:

3. Արփ. Արփիարյանի գեղագիտական առաջադրույթների ուրույն դրսևորումների և նոր մեկնությունների ենթ հանդիպում էր. Օտյանի երկերում: Եր. Օտյանը գրական իր ուրույն ոճով և անհատականությամբ թեման արտահայտեց այլաբանորեն՝ երգիծելով ու հեզնելով արատավոր երևույթները: Նա նկատում է, որ 1894 - 96 թթ. դեպքերի աղետավոր ընթացքը ազդել է հայի հոգեբանության վրա՝ ձևավորելով նոր հոգեկերտվածք ունեցող տեսակ: Նա հայտնաբերել է, որ ջարդերը ծնել են խաչագողերի նոր տիպեր՝ արտասահմանի գործիչ, խմբագիր, նախկին գործիչ, կեղծ լրտես, պրոպագանդիստ, անվավեր հերոս, հակահեղափոխական և այլք: Մինչև ջարդերն էլ սրանք արդեն այլաբանությամբ խաչագողեր էին կամ էլ այդպիսին դառնալու ճանապարհին էին: Հեղափոխությունը նրանց դարձրել է մակաբույծ, այլ կերպ՝ իրարդրությունը նրանց վերափոխել է նոր տեսակի, դարձրել նոր կերպար: Օտյանը նորօրյա խաչագողերին հակադրել է իսկական հեղափոխականներին՝ նոր՝ արթնացունի, պայքարի ոգեկոչման ու մարդկային հոգեբանությամբ հերոսներին:

4. Օտյանական ավանդների շարունակողն ու զարգացնողը դարձավ Առանձարը: Նա արտացոլեց 1894 - 96 թթ. ջարդերի ողբերգականության «գավեշտով լի» դրսևորումները, պատկերեց դաժան իրականության պարտադրանքով տառապող հայի հոգեկերտվածքը:

Աշխատանքում քննել ենք «Վշտի ծիծաղ» ժողովածուն, որում գետեղված նորավեպերն աչքի են ընկնում ազգային ողբերգության հանդեպ ուրույն մոտեցմամբ, արտացոլում ջարդերի հետևանքով ստեղծված սնունդային թե՛ իրական, թե՛ հոգեբանական դաշտում: Առանձարը փոքր գավեշտ թվացող, սակայն հիմքում դրամատիկ իրողություններ պարունակող միջադեպերի մեջ ևս յուրօրինակ բնաջնջման վտանգ էր տեսնում: Նա միտումնավոր շրջանցում էր ջարդի ու ավերի մանրամասները ներկայացնող պատկերները՝ նպատակ ունենալով ընդգծել երևույթի հոգեբանական սարսափելի դրսևորումներն ու զգացողությունները: Իբրև Առանձարի նորավեպերի էական առանձնահատկություն՝ դիտարկվում է այն յուրահատկությունը, որ գրողը ներկայացրել է ոչ միայն տիպիկ թուրք պաշտոնյայի ու միջնորդ մարդկանց, այլև հայտնաբերել թուրքական իրականության տվյալ ժամանակների թուրք խաչագողերին, որոնք, ստեղծված իրադրությունից օգտվելով, կողոպտում էին բազմաչարչար հայ ժողովրդին՝ հանդես գալով օրենքի անուկից: Ասվածից բացի՝ նշվում է, որ Առանձարը հեզնանքով, բայց հմտորեն բացահայտում է նաև թուրքական օրենքների հակամարդկային որակները:

5. Արփ. Արփիարյանից, Եր. Օտյանից ու Առանձարից ոճով, նախասիրություններով միանգամայն տարբեր գրող էր Երուխանը, որը թեմայի ու գաղափարի մեջ նրանց շարունակողն ու փոխլրացնողն էր: Նա առաջիններից մեկն էր, որ նկատեց 1894 - 1896 թթ. ջարդերի հոգեբանական ազդեցությունը մասնավորապես աստանդական հայի ներաշխարհի վրա, ինչպես և այն, որ ջարդերին հաջորդող տարիներին հայ մարդու հոգեկերտվածքն արդեն այլ՝ նորակերպ դրսևորումներ ունի: Նորօրյա գաղթականը տարբերվում է դասական

պանդուխտից հայրենիք վերադառնալու անհնարինության գիտակցության ճընշունը իր մեջ կրողի հոգեբանությամբ:

6. Երևույթը իր ուրույն մեկնությունները ստացավ մաս, այսպես կոչված, «ուղեկից» մի շարք գրողների կողմից: Դրանցից առավել հայտնիներից Ս. Պարթևյանը, որը գրեթե ամբողջությամբ տվեց 1894 - 96 թթ. աղետալի դեպքերի առջեք բերած ծանր ու անդառնալի հետևանքների համապատկերը: Նա ձըգտել է ստեղծել այնպիսի գրական երկեր, որոնք, թեև օրերի գրականությանը գեղարվեստորեն զիջող, սակայն հաջողված էին իբրև աղետալի ժամանակաշրջանի զգայություններ, տիրապետող դարձող հոգեբանության վկայություններ՝ իբրև դրանց անկեղծ տարեգրություն:

7. Թեև Ս. Պարթևյանից ոճով, մոտեցումներով և մեկնաբանություններով զգալիորեն տարբեր, սակայն ընդհանրության մեջ նույն մտահոգություններով թեմային անդրադարձել են մաս Դովի. Թվկատինցին, Ռ. Ջարդարյանը, Տ. Չյոկյուրյանը: Նրանք ևս կենտրոնացել են 1894 - 96 թթ. ջարդերի հոգեբանական քննության և դրա արդյունքում՝ նոր հայկական հոգեկերտվածքի կայացման խնդիրների վրա:

8. Լ. Բաշայանը և Ռ. Ջարդարյանը երևույթի ուրույն շարունակողներն էին, իսկ արդեն Տ. Չյոկյուրյանի երկերում նկատվում են գեղարվեստական նոր, աննկատելի թվացող փոփոխություններ: Այս երեք գրողների ընդհանրական գծերից մեկն էլ այն է, որ ողբերգականին զուգահեռ նրանք զարգացրել են մաս հերոսական ոգու որոնման միտում և կերտել ցեղային ժառանգականությամբ պայմանավորված՝ հերոսականության բռնկումներով աչքի ընկնող հերոսներ:

9. Քննվել և արժևորվել են մաս այնպիսի գրողների (Ս. Սվաճյան, Վ. Սըվաճյան, Ս. Պոտուրյան, Վ. Թեքեյան) ստեղծագործություններ, որոնք, թեև գեղարվեստորեն թույլ են, սակայն, որպես ժամանակի իրողությունների և դրանց ազդեցությամբ ձևավորվող նոր գրական հերոսի պատկերացումներ, կարևոր են դիտարկվող ժամանակի գրականության մասին լիարժեք պատկերացում կազմելու տեսակետից:

## ԱՏԵՆԱԽՈՍՏԻԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳՐԱՏԱՐԱՎԿԱԾ ԳՈՂՎԱԾՆԵՐ

1. **1894 - 96 թթ. ջարդերի արձագանքը Տ. Չյոկյուրյանի նորավեպերում**, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2013, թ. է, էջ 107 - 113:

2. **Ցեղային ոգու նկարագիրը Ռ. Ջարդարյանի «Ցայգալույս» ժողովածուում**, «Բանբեր Երևանի համալսարանի», ԵՊՀ հրատ., Երևան, 2013, № 141. 2, էջ 22 - 31:

3. **Երուխանի «Գաղթականները» անավարտ վեպը**, «Գրականագիտական հանդես», Երևան, 2013, թ. ԺԴ, էջ 79 - 88:

4. **Հոգեկերտվածքային նոր հերոսը Երուխանի նորավեպերում**, «Սփյուռքագիտություն», տարեգիրք, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 175 - 194:

**Нара Гарибовна САРГСЯН**  
**«Отклики на резню 1894-1896гг.**  
**западноармянской прозе»**

10.01.01 – Диссертация на соискание ученой степени кандидата  
филологических наук  
по специальности «Армянская классическая литература».

Защита состоится 17 июня 2015 года в 14:30 на заседании профессионального  
совета по литературоведению 012 ВАК, функционирующей в ЕГУ.  
Адрес: Ереван, 25, Абовяна, 52А,  
корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 202.

**Обобщение**

Западноармянская проза, созданная в период «малого геноцида», т.е. с 90-х годов XIX века до большого Геноцида 1915 года, является масштабной художественно - документальной литературой, отражающей периодические истребления, организованные султаном Гамидом, хотя и не выпадала из поля зрения исследователей, однако и не обсуждалась и не была оценена с точки зрения достижения современного литературоведения. Диссертация освещает закономерности художественного отражения общественно - политической жизни в произведениях различного жанра западноармянских прозаиков того периода (О. Тлкатинци, Арп. Арпиарян, Л. Башальян, Ер. Отян, Арандзар, Ерухан, С. Партевян, Т. Чекюрян, Р. Зардарян, М. Свачян, В. Свачян, М. Потуриан, В. Текеян).

Во вступлении кратко обосновывается выбор изучаемой темы, характеризуется актуальность диссертации, научная новизна, разъясняются цели и задачи исследования.

Первая глава («Политическая ситуация Турции конца XIX века и армянская литература») характеризует политическую ситуацию эпохи, начало истреблений 1894-1896 гг., их причины и следствия. На основе фактов и исследований очевидцев, ученых, переживших писателей выражается уверенность в том, что события 1894-1896 гг. были первыми аккордами Великого Геноцида, условно названные «первым» или «малым» Геноцидом. Они оказали неизбежное влияние на развитие литературной жизни. Если до «малого» геноцида в западноармянских литературных кругах главенствовал романтизм и исследование, наряду с политикой, социально - нравственный проблем, то после них родилась необходимость новых литературных выразительных средств, тематики и мировоззрения. А. Арпиарян, как вдохновитель и лидер литературного поколения 80-х, отметил важность проблемы героя, наделенного знанием жизни и новым духовным строем. После погромов появление героя нового идейного типа (полностью преданного вопросам существования нации, чье душевное состояние под их воздействием претерпело необратимые перемены) обосновывается обсуждением повести Арпиаряна «Кармир жамуц».

Во второй главе («Между документальностью и художественностью») исследовано многожанровое произведение Ерванда Отяна между документальностью и художественностью событий. Великий сатирик показывает, что трагический ход событий 1894 - 1896 гг. повлиял на психологию армянина, сформировав тип с новым душевным строем. Посему замечено, что именно истребления породили новые типы «хачагохов» - зарубежный деятель, редактор, бывший деятель, лже - агент,

пропагандист, недействительный герой, контрреволюционер и другие. Они уже до истреблений были мошениками иного рода или на пути к превращению в таковых. Революция превратила их в паразитов. В то же время Отян противопоставил новым мошеникам подлинных революционеров пробуждения, призывающих к борьбе и с борющейся психологией, новых героев.

Третья глава («Принуждение к горестному смеху: Арандзар») посвящена толкованию произведений Арандзара. Он отразил проявления «преисполненной юмора» трагичности истреблений 1894 – 1896 гг., изобразил духовный строй армянина, страдающего навязанной жестокой реальностью. В этом плане исключительным сборником является «Горестный смех», помещенные в котором новеллы отличаются своеобразным подходом к национальной трагедии, отражают кошмар, возникший вследствие истреблений, как в реальной, так и в духовной плоскости.

Четвертая глава («Хроника искажения национального духовного строя») посвящена исследованию произведений Ерухана и С. Партевяна. Здесь рассмотрены произведения двух писателей на тему беженцев. И Ерухан, и С. Партевян рассматривают вопрос с разных точек зрения, дают хронику искажения национального духовного строя. Разноплановыми подходами они раскрывают изменения духовного строя беженца армянина, обусловленные трагическими реалиями.

В пятой главе («Свет и тень реальности») исследованы произведения различных авторов того времени – О. Тлкатинци, Л. Башальяна, Р. Зардаряна, Т. Чекюряна, С. Партевяна, М. Потуряна, М. Свачяна, В. Свачяна, В. Текеяна. Здесь показано, что, помимо представления психологической драмы нового героя, западноармянские писатели параллельно создавали также образы, отличающиеся порывами героического духа.

В заключение диссертации даны выводы соискателя, список использованной литературы.

## Nara Gharib Sargsyan

### “The Response to the 1894-1896 Massacres in the Western Armenian Prose”

Philology PHD Thesis, Specialty 10.01.01. “Armenian Classical Literature”

Defense date: 2015. June 17, 14:30 pm at the session of the VAK Specialized Council (High Attestation Commission) 012 under Yerevan State University.

Address: Room №202, Faculty of Philology, YSU, 52/a Abovyan str., Yerevan

### Summary

The Western Armenian prose, created during “the small genocide”, that is, from the 90s of the 19<sup>th</sup> century to the great genocide of the 1915, an enormous amount of fiction, depicting the continuous massacres perpetrated by sultan Hamid, though still being of interest to researchers, has not been studied and evaluated in terms of the achievements of history of literature. The dissertation is devoted to the coverage of regularities of fiction expressing socio - political life in different genres of works by Western Armenian writers (H. Tikatintsi, Arp. Arpiaryan, L. Bashalyan, Y. Otyan, Arandzar, Yerukhan, S. Partevyan, T. Chyokyuryan, R. Zardaryan, M. Svajian, V. Svajian, M. Poturian, V. Tekeyan), creating in the important historical period. The introduction corroborates the choice of the theme of research, describes the modernity of the dissertation, states the scientific novelty and explains the aim and problems of the research.

The first chapter (“The Political Situation in Turkey and the Armenian Literature in the 19<sup>th</sup> Century”) describes the political situation of the time, since 1894-96 massacres, the reasons and consequences of those massacres. In the dissertation we express conviction, based on the facts and researches, brought by witnesses, scholars, and writers who survived after the genocide, that the first instance of the Great Genocide were the 1894-96 events, which have been conventionally called as “The first” or a “Small genocide”. It had its inevitable influence on the process of the development of the literary life. While before the “small genocide” the dominant direction in the Western Armenian literary circles was romanticism and together with romanticism the analysis of social-ethical issues as well, afterward occurred a need for new forms of expression, themes and worldviews. A. Arpiaryan, as an inspirer and leader of the literary generation of the 80s, gave much importance to the problem of a hero with a new cognition of life and human nature. The appearance of the ideologically new type of hero (who was completely devoted to the issues of national existence and whose inner world experienced deep and irreparable changes as a result of those issues) after the massacres is identified in the analysis of the novelette “Karmir zhamuts” (“From the red church”).

The second chapter (“Within the Confines of Authenticity and Art”) analyzes Yervand Otyan’s works of various genres within the confines of authenticity and art. The great satirist shows that the disastrous course of the events has told on the psychology of the Armenian man, forming a type with an inner world. So, it has been noted that it was the massacres that gave birth to the new types of “khachagogh (swindler): a politician acting abroad, an editor, a former politician, a fake spy, a propagandist, an unauthentic hero, an anti - revolutionaries and others. These people belonged to a different type of “khachagogh” or were on the way of becoming one before the massacres. The revolution has made them parasites. At the same time, Otyan has also contradicted the

“khachagogs” of the day to the real revolutionaries: the new heroes of awakening, calling up for struggle.

The third chapter (“The Imposing of Laughter of the Sorrow”) is devoted to the interpretation of the work by Arandzar. In the work the author has depicted the humorous expressions of the tragedy of 1894 - 96 massacres, the inner world of the Armenian suffering from cruel reality. In this respect “The Laughter of the Sorrow” is an exceptional analogy and the novels, included in it, have always caught our attention with their special approach to our national tragedy, expressing the nightmare, formed as a result of massacres, both in the real and psychological sphere.

The fourth chapter (“The Chronology of the Destruction of National Inner World”) is devoted to the analyses of the works by Yerukhan and S. Partevyan. The works by the two writers, touching the theme of migration, have been studied. Both Yerukhan and Partevyan have analyzed the issue by different approaches, expressing the chronology of the destruction of national inner world. With their many - sided approaches they discover the changes of the inner world of an Armenian emigrant, which has been the result of the disastrous reality.

The fifth chapter (“The Light and Shadow of the Reality”) analyzes the works by various authors of the time : H. Tlkatintsi, L. Bashalyan, R. Zardaryan, T. Chyokyuryan, S. Partevyan, M. Poturyan, M. Svajian, V. Tekeyan. Here we want to make known that the Western Armenian writers, besides representing the psychological drama of the hero, have simultaneously created figures with heroic souls.

The conclusions and the references are given below.